

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Սույն Կոնվենցիան ստորագրած Կառավարությունները, հանդիսանալով Եվրոպայի խորհրդի անդամներ,

համարելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել իր անդամների միջև ավելի սերտ միասնության՝ նրանց ընդհանուր ժառանգությունը հանդիսացող գաղափարների և սկզբունքների պաշտպանության և իրականացման նպատակով, համարելով, որ այդ նպատակի իրականացումը կնպաստի Եվրոպայի ժողովուրդների միջև ավելի լավ փոխըմբռնմանը,

համարելով, որ այդ նպատակների համար ցանկալի է ոչ միայն կնքել խորհրդի անդամների միջև մշակութային համագործակցության մասին երկկողմ կոնվենցիաներ, այլ նաև հետամուտ լինել ընդհանուր գործողությունների քաղաքականությանը, որը նպատակաուղղված է պահպանելու Եվրոպական մշակույթը և խրախուսելու դրա զարգացումը,

որոշելով կնքել ընդհանուր Եվրոպական մշակութային Կոնվենցիա, որի նպատակն է բոլոր անդամների, ինչպես նաև այն Եվրոպական պետությունների, որոնք կարող են միանալ Կոնվենցիային հետագայում, քաղաքացիների միջև խրախուսել միմյանց լեզուների, պատմության և քաղաքակրթությունների և նրանց բոլորի համար ընդհանուր հանդիսացող քաղաքակրթության ուսումնասիրությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ համապատասխան միջոցներ կձեռնարկի, որպեսզի պահպանի և խրախուսի իր ազգային ներդրումը Եվրոպայի ընդհանուր մշակութային ժառանգությունում:

ՀՈԴՎԱԾ 2

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ՝ ըստ հնարավորության.

ա) խրախուսում է իր քաղաքացիների կողմից մյուս Պայմանավորվող կողմերի լեզուների, պատմության և քաղաքակրթությունների ուսումնասիրումը և այդ Կողմերին հնարավորություն է ընձեռում իր տարածքում խրախուսել նման ուսումնասիրությունները, և

բ) ձգտում է խրախուսել մյուս Պայմանավորվող կողմի տարածքում իր լեզվի կամ լեզուների, պատմության և քաղաքակրթության ուսումնասիրությունը և հնարավորություն է ընձեռում այդ Կողմերի քաղաքացիներին իր տարածքում զբաղվել նման ուսումնասիրություններով:

ՀՈԴՎԱԾ 3

Պայմանավորվող կողմերը խորհրդակցում են միմյանց հետ Եվրոպայի խորհրդի շրջանակներում Եվրոպայի համար հետաքրքրություն ներկայացնող մշակութային միջոցառումները խթանելու համար համաձայնեցված գործողություններ ձեռնարկելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 4

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, ըստ հնարավորության, դյուրացնում է մշակույթի գործիչների, ինչպես նաև մշակութային նշանակության արժեքների տեղաշարժը և փոխանակումները՝ ի կատարումն 2-րդ և 3-րդ հոդվածների:

ՀՈԴՎԱԾ 5

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ուշադրություն կհատկացնի իր հսկողության ներքո գտնվող Եվրոպական մշակութային արժեքներին՝ որպես Եվրոպայի ընդհանուր մշակութային ժառանգության անբաժան մասի, համապատասխան միջոցներ կձեռնարկի դրանք պահպանելու համար եւ կերաշխավորի դրանց հիմնավորված մատչելիությունը:

ՀՈԴՎԱԾ 6

1. Սույն Կոնվենցիայի դրույթների կիրառման համար առաջարկները եւ Կոնվենցիայի մեկնաբանման հետ կապված հարցերը կքննարկվեն Եվրոպայի խորհրդի Մշակույթի փորձագետների կոմիտեի հանդիպումներում:

2. Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող որեւէ պետություն, որը միացել է սույն Կոնվենցիային 9-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներին համապատասխան, կարող է նշանակել ներկայացուցիչ կամ ներկայացուցիչներ՝ նախորդ կետում նախատեսված հանդիպումներին մասնակցելու համար:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված հանդիպումներում ձեռք բերված եզրակացությունները հանձնարարականների տեսքով կներկայացվեն Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի քննարկմանը՝ բացառությամբ, եթե դրանք Մշակույթի փորձագետների կոմիտեի իրավասությանը վերաբերող վարչական բնույթի հարցերի հետ կապված որոշումներ չեն, որոնք լրացուցիչ ծախսեր չեն պահանջում:

4. Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հորհրդի անդամներին եւ սույն Կոնվենցիային միացած ցանկացած պետության Կառավարության կհաղորդի Նախարարների կոմիտեի կամ Մշակույթի փորձագետների կոմիտեի կողմից ընդունված բոլոր համապատասխան որոշումները:

5. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ժամանակին կծանուցի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ցանկացած գործողության մասին, որն իր կողմից կարող է ձեռնարկվել սույն Կոնվենցիայի դրույթները կիրառելու համար՝ Նախարարների կոմիտեի կամ Մշակույթի փորձագետների կոմիտեի որոշումներին համապատասխան:

6. Այն դեպքում, եթե Սույն Կոնվենցիայի կիրառման համար որոշակի առաջարկներ հետաքրքրում են միայն սահմանափակ թվով Պայմանավորվող կողմերի, նման առաջարկները կարող են հետագայում քննարկվել 7-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝ նախատեսելով, որ դրանց իրագործումը Եվրոպայի խորհրդից ծախսեր չի պահանջում:

ՀՈԴՎԱԾ 7

Եթե, սույն Կոնվենցիայի նպատակներին նպաստելու նպատակով, երկու կամ ավել Պայմանավորվող կողմեր ցանկանում են կազմակերպել հանդիպում Եվրոպայի խորհրդի նստավայրում, բացի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված դեպքերից, ապա Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը նրանց ցուցաբերում է անհրաժեշտ վարչական օժանդակություն:

ՀՈԴՎԱԾ 8

Ոչինչ սույն Կոնվենցիայում չպետք է դիտվի որպես ազդեցություն ունեցող.
ա) գոյություն ունեցող ցանկացած երկկողմ մշակութային կոնվենցիայի դրույթների վրա, որի ստորագրողը կարող է լինել Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը, եւ չպետք է պակաս ցանկալի դարձնի յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի համար հետագա նմանօրինակ կոնվենցիայի ստորագրումը, կամ
բ) ցանկացած Պայմանավորվող կողմի տարածքում գործող՝ օտարերկրացիների մուտքի, բնակության եւ երկրից հեռանալու վերաբերյալ օրենքներին եւ

Ենթաօրենսդրական ակտերին ենթարկվելու՝ անձանց պարտավորության վրա:

ՀՈՂՎԱԾ 9

1. Սույն Կոնվենցիան բաց կլինի Եվրոպայի խորհրդի անդամների ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման, եւ վավերագրերը ի պահ կհանձնվեն Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում երրորդ ստորագրող Կառավարության կողմից վավերագիրն ի պահ հանձնվելուն պես:

3. Կոնվենցիան ավելի ուշ վավերացրած յուրաքանչյուր ստորագրող Կառավարության համար այն ուժի մեջ կմտնի իր վավերագիրը ի պահ հանձնելու օրը:

4. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն միաձայն քվեարկությամբ կարող է որոշել հրավիրել ցանկացած Եվրոպական պետության, որը Եվրոպայի խորհրդի անդամ չէ, միանալու սույն Կոնվենցիային՝ այնպիսի ժամկետների եւ պայմանների ներքո, որոնք համապատասխան կհամարի: Նման հրավեր ստացած ցանկացած պետություն կարող է

միանալ Կոնվենցիային՝ միանալու մասին իր վավերագիրը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ի պահ տալով: Նման միացումը ուժի մեջ կմտնի վավերագիրը ստանալու օրը:

5. Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը կծանուցի Եվրոպայի խորհրդի բոլոր անդամներին եւ ցանկացած միացած պետության բոլոր վավերագրերի եւ միանալու մասին փաստաթղթերի ի պահ հանձնման մասին:

ՀՈՂՎԱԾ 10

Ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է սահմանել այն տարածքները, որոնց նկատմամբ սույն Կոնվենցիայի դրույթները կկիրառվեն, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հայտարարություն ուղարկելու միջոցով, որն էլ վերջինս կփոխանցի մյուս բոլոր Պայմանավորվող կողմերին:

ՀՈՂՎԱԾ 11

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ցանկացած ժամանակ կարող է չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան այն բանից հետո, երբ Կոնվենցիան ուժի մեջ է եղել 5 տարի՝ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված գրավոր ծանուցմամբ, որը կտեղեկացնի մյուս Պայմանավորվող կողմերին:

2. Նման չեղյալ հայտարարումը համապատասխան Պայմանավորվող կողմի համար ուժի մեջ է մտնում ծանուցումը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից վեց ամիս հետո:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճորեն լիազորված լինելով իրենց Կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Փարիզ քաղաքում 1954 թվականի դեկտեմբերի 19-ին, մեկ օրինակով, անգլերեն եւ ֆրանսերեն. ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք ի պահ են տրվելու Եվրոպայի խորհրդի արխիվներին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Կոնվենցիայի հաստատված պատճենները կուղարկի ստորագրած կամ միացած

Կառավարություններին:

* Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1997 թվականի ապրիլի 25-ից:

